# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 31-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՑ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով,10.06.2008թ.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ -117-Ն օրենքով,ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով , ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով, որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ,հիմք ընդունելով Մարց գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 01 ապրիլի 1991թ. N 1 արձանագրության քաղվածքը, <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> անշարժ գույքի գործակալության կողմից տրված հողամասի հատակագիծը,ժառանգության իրավունքի վկայագիրը՝գործ N 2 (սեղանամատյան՝39) և Մարց գյուղի բնակիչ Սաշա Լևոնի Արզումանյանի/մուտք՝ 09.01.2023թ. թիվ 4/ դիմումը՝

Որոշում եմ.

1.Վերականգնել և ճանաչել Սաշա Լևոնի Արզումանյանի սեփականության իրավունքը Թումանյան համայնքի, գյուղ Մարցում գտնվող 06-071-0110-0066 ծածկագրով 0.18185 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ:
2.Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
3. Անշարժ գույքը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23թ. փետրվարի 13
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 32-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ.մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով <<ՏՍ ՌԻԵԼԻ>> ՍՊԸ-ի կողմից 26.01.2023 թվականին տրված հողամասի հատակագիծը և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Թումանյան համայնքի վարչական տարածքում Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0016-0029 ծածկագրից առանձնացված 0,04 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողատեսք գործառնական նշանակության հողատեսքին տրամադրել << ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,ք.Թումանյան,1-ին փողոց, 1-ին նրբանցք,47 հողամաս>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. փետրվարի 13
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 33-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի /մուտք՝ 08.02.2023թ.թիվ 172/ դ գրությունը՝

Որոշում եմ.

1. Բավարարել ՀՀ տարածքայի կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի դիմումը և Տ-5-69,/Հ-70/-Աւնիծոր ավտոճանապարհի կմ0-000-կմ4-000,/Հ-70/-Քարինջ ավտոճանապարհի կմ0+000-կմ3+500,Տ-5-82,/Հ70/- Լորուտ ավտոճանապարհի կմ0+000-կմ1+600 և Տ-5-93,/Հ-70/-Մարց ավտոճանապարհի կմ0+000-կմ0+800 հատվածների հիմնանորոգման աշխատանքների կատարման համար տալ շինարարության թույլտվություն:

2. Աշխատակազմի քաղաքաշինության ոլորտի մասնագետին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2023թ. փետրվարի 14
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 34-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով Լյուդմիլա Հայկազի Ստեփանյանի դիմումը,Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ 1330935 տրված 30.06.2004թ.,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը,տրված 13.12.2022թ.գրանցամատյանի գրանցում N 4818 և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Ռազմիկ Հայկազի Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք.Թումանյան (ծած.06-004-012-000021-001) բնակելի տանը մակերեսի չափը՝ 63,9 քմ և բնակավայրերի կառուցապատման հողամասին, մակերեսի չափը՝ 0,0534 հա տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, ք.Թումանյան, 2-րդ փողոց,18/1 բնակելի տուն>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. փետրվարի 14
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 35-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 10 հոդվածով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023թ. հունվարի 18-ի N 01//2071-2023 և Լոռու մարզպետի 2023թ. փետրվարի 14-ի N 01/-2023 գրությունները՝

Որոշում եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2022թ. հունիսի 24-ի «ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագիրը հաստատելու մասին» թիվ 131-Ա որոշման թիվ 2 հավելվածը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23թ. փետրվարի 14
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 36-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղաքացի Ռաֆայել Գառնիկի Պարանյանի դիմումը,Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ 1328198 և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Ռաֆայել Գառնիկի Պարանյանին /համասեփականատերեր՝ Հակոբյան Սիրվարդ Համազասպի, Պարանյան Սպարտակ Ռաֆայելի, Պարանյան Անի Ռաֆայելի, Պարանյան Վահե Ռաֆայելի/ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ, քաղաք Թումանյան (ծած.06-004-023-000022) բնակելի տանը և բնակելի կառուցապատման հողամասին, մակերեսի չափը՝ 0,1834 հա տրամադրել նոր փոստային << Լոռու մարզ,Թումանյան համայնք, ք.Թումանյան, 11-րդ փողոց,9 բնակելի տուն>> հասցե:
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2023թ. փետրվարի 13-ի N 29-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23 թ. փետրվարի 14
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 37-Ա

## ԴՍԵՂ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԱՐԵՎՀԱՏ ԵՍԱՅՈՒ ԳՈԳԻՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԻՐ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆ (ՕԳՆԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության>> 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման դրույթներով,ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Թումանյանի համայնքապետարանի <<Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովի>> 2023թ. փետրվարի 13-ի նիստի որոշումը և Դսեղ գյուղի բնակչուհի Արևհատ Եսայու Գոգինյանի դիմումը՝

Որոշում եմ.

Դսեղ գյուղի բնակչուհի Արևհատ Եսայու Գոգինյանի խնդրանքով,որը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները և կատարել պարտականությունները, իր համաձայնությամբ նրա նկատմամբ Օֆիկ Հրաչիկի Գոգինյանին նշանակել պատրոն (օգնական):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 38-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշար գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Գոհար Հայկի Ռամազյանի դիմումը,,ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը,տրված 14.02.2023թ.գրանցամատյանի գրանցում N 695, 697 և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Գոհար Հայկի Ռամազյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Ահնիձոր (ծած.06-012-0002-0035) բնակելի տանը և բնակավայրերի կառուցապատման հողամասին, մակերեսի չափը՝ 0,09799 հա տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Ահնիձոր, 2-րդ փողոց, 1 բնակելի տուն>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23թ. փետրվարի 15
ք.Թումանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 39-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՉԿԱԼՈՎ ԳՅՈՒՂԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 46/1 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-089-0026-0007 ԾԱԾԿԱԳՐԻ 0.09778 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՆՈՒՇ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24) կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3) կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 70–րդ հոդվածներով, 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 13-րդ կետի գ) ենթակետը, 22-րդ և 23-րդ կետի դրույթները, Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 94-Ա որոշումը և հաշվի առնելով աճուրդի կազմակերպչի 2023 թվականի փետրվարի 14-ի «Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդով վաճառելու մասին» թիվ 1 արձանագրությունը, ըստ որի 2023 թվականի փետրվարի 14-ին Թումանյանի համայնքապետարանում կայացած աճուրդում համայնքի սեփականություն հանդիսացող Չկալով գյուղում գտնվող 06-089-0026-0007 կադաստրային ծածկագրի 0.09778 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը սակարկության արդյունքում հաղթող է ճանաչվել Անուշ Մերուժանի Մխիթարյանը՝

Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Չկալով գյուղում գտնվող 06-089-0026-0007 կադաստրային ծածկագրի 0.09778 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, որը չի համարվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս, օտարել Անուշ Մերուժանի Մխիթարյանին ՝այսուհետ գնորդ:

2. Սահմանել, որ գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա ժամկետում հողատարածքի սակարկության արդյունքում ձևավորված գինը՝ 210 000 (երկու հարյուր տասն հազար) ՀՀ դրամ վճարել Թումանյան համայնքի բյուջեի N 90026513023 հաշվին:

3. Թումանյան համայնքի ղեկավարի անունից գնորդի հետ 2-օրյա ժամկետում կնքել հողատարածքի օտարման պայմանագիր:

4. Նախազգուշացնել գնորդին, որ հողատարածքի օտարման պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:

5.Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

20 23թ. փետրվարի 16
ք.Թումանյան